

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Մերգեյ Մարգսյան**

Հայաստանի Հանրապետության բարդ աշխարհաքաղաքական, ոչ դյուրին ռազմաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասի տարածաշրջանում, սեփական ռազմական, քաղաքական և տնտեսական պոտենցիալի օբյեկտիվ գնահատականը կանխորոշում են խոր ինտեգրացիոն նախագծերին մասնակցելու նրա ձգտումն ու պատրաստակամությունը:

Պատահական չէ, որ Հայաստանի՝ որպես անկախ պետության, ռազմաքաղաքական ինտեգրումը տարածաշրջանայինից ավելի լայն անվտանգության համակարգերում սկսվել է անկախության ձեռքբերումից գրեթե անմիջապես հետո: Առաջին հերթին, դա Անկախ Պետությունների Համագործակցությունն էր (ԱՊՀ, 1991թ. դեկտեմբերի 8) և Հավաքական անվտանգության պայմանագիրը (ՀԱՊ, 1992թ. մայիսի 15):

Հավաքական անվտանգության պայմանագրի ստորագրումը ինը նորանկախ պետությունների (ԱՊՀ տասներկու երկրների թվից) կողմից պայմանավորված էր անվտանգության համակարգի ստեղծման սուր անհրաժեշտությամբ, որը, առնվազն մի քանի տարվա ընթացքում, թույլ կտար պայմանագիրը ստորագրող պետություններին պաշտպանել իրենց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջա-

* «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փոխ-ղեկավար, ավագ փորձագետ:

կանությունը: Այն ծանրակշիռ զսպող գործոն էր սահմանակից պետությունների համար՝ նոր հարևանների ստեղծված թուլությունից օգտվելով հօգուտ իրենց հնացած սահմանային կամ քաղաքական խնդիրները լուծելու հարցում:

Այսպես, Հայաստանի մուտքը ՀԱՊ պակաս կարևոր դեր չի խաղացել այն հարցում, որ Մոսկվան կոշտ նախազգուշացումներ անի Անկարային Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը չմիջամտելու անհրաժեշտության մասին: 1992թ. մայիսի 20-ին ԱՊՀ Զինված ուժերի գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Ե.Շապոշնիկովը մամուլի ասուլիսում հայտարարեց, որ «եթե այնտեղ ևս մեկ կողմ ավելանա, ապա մենք կարող ենք հայտնվել երրորդ համաշխարհային պատերազմի եզրին»:

ՀԱՊ հաջող իրականացրած կարևոր խնդիրներից էր առկա հակամարտային պոտենցիալի նվազեցումը և այն, որ թույլ չտրվեց նորանկախ պետությունների միջև ուժային դիմակայությունների նոր կետերի հայտ գան: Ըստ էության, հաջողվեց խուսափել լուրջ միջպետական զինված հակամարտություններից, իսկ դրանց մի մասը, մասնավորապես՝ ղարաբաղյանը, հանդարտեցնել և հանգեցնել հրադարարի ռեժիմի: Այն փաստը, որ թե՛ Հայաստանը (1992թ. մայիսից), թե՛ Ադրբեջանը (1993թ. սեպտեմբերից) ստորագրեցին Հավաքական անվտանգության պայմանագիրը, Մոսկվայի համար հավելյալ ազդակ հանդիսացավ ակտիվացնելու իր միջնորդական դերը, որն էլ հանգեցրեց Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից 1994թ. մայիսին մարտական գործողությունները դադարեցնելու պայմանագրի ստորագրմանը:

Եվրասիական ինտեգրացիոն գործընթացի ճանապարհին կարելի և հարկավոր կլինի օգտագործել ԱՊՀ և ՀԱՊԿ շրջանակներում ձեռք բերված համագործակցության փորձը, բայց պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ ինտեգրման նոր հարթակ են տեղափոխ-

վելու նաև այն բոլոր խնդիրները, որոնք կուտակվել են առայսօր և լուծում չեն ստացել: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը վակուումի մեջ չի ընթանալու, և Հայաստանի հարևան պետությունների արտաքին քաղաքական կողմնորոշիչների վեկտորները միշտ չէ, որ նույն ուղղությունն ունեն, դրանք երբեմն հակառակ են Երևանի ինտեգրացիոն ձգտումներին:

Ներկայում ՀՀ ռազմական անվտանգության հիմքն են հանդիսանում.

- Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակը;
- ՀԱՊԿ-ին անդամությունը և, առաջին հերթին, ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությունը; ՀՀ տարածքում 102-րդ ռուսական ռազմակայանի (ՌՌԿ) տեղակայումը և ՌԴ ԱԴԾ սահմանապահ զորքերի «Հայաստան» զորախումբը;
- ինժեներատեխնիկական կառույցների (ԻՏԿ) համալիրի առկայությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում դիմակայության գծի երկայնքով, դրա պահպանումը բարձր պատրաստականության վիճակում և մշտական կատարելագործումը:

ՀՀ ռազմական անվտանգությանը ներկայիս սպառնալիքներն են.

- շարունակվող դարաբաղյան հակամարտությունը; Հարավային Կովկասի տարածաշրջանում Ադրբեջանի սանձազերծած սպառազինությունների մրցավազքը, Բաքվի սերմանած ռևանշիստական տրամադրությունները և նրա՝ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելուն անցնելու շարունակական սպառնալիքները;

- Թուրքիայի արտաքին քաղաքականության ակտիվացումը, դրանում հարձակողական ագրեսիվության ի հայտ գալը;
- Իրանի Իսլամական Հանրապետության դեմ այս կամ այն ինտենսիվությամբ ռազմական գործողության անցկացման հեռանկարները, ինչին, մասնավորապես, նպաստում է տարածաշրջանում ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) տարրերի տեղակայումը:

Այս իրավիճակում Հայաստանի ռազմական անվտանգության երեք հիմնական բաղկացուցիչների ամրապնդմանն ու հզորացմանը և երեք հիմնական սպառնալիքների կանխմանն ուղղված քաղաքականությունն աշխատում է հոգուտ ՀՀ ռազմական անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացման:

Այսպես, 2010թ. օգոստոսի 20-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրված պայմանագրի գործողության ժամկետը 102-րդ ՌԲԿ գործառնության մասին երկարաձգվել է մինչև 2044թ.: Բացի այդ, պայմանագրի լրացուցիչ արձանագրությամբ նախատեսվում է ընդլայնել կայանի աշխարհագրական և ռազմավարական պատասխանատվության ոլորտը: Արձանագրության դրույթների համաձայն՝ ՌԲԿ-ի վրա, բացի Ռուսաստանի Դաշնության շահերի պաշտպանությունից, դրվում են Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի հետ համատեղ:

102-րդ ՌԲԿ պատասխանատվության գոտու ընդլայնումը, առաջին հերթին, ուժեղացնում է Հայաստանի մոբիլիզացիոն ռեսուրսը դարաբաղյան հակամարտության գոտում մարտական գործողությունների վերսկսման դեպքում: Դրանով իսկ Ռուսաստանը մեկ անգամ ևս հաստատեց հակամարտության մասնակիցների միջև առկա ուժերի հավասարակշռությունը պահպանելու իր ձգտումը՝ հայադրբեջանական դիմակայությունն էլ ավելի չսրելու համար:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ին, ապա ներկայում կազմակերպությունն օպերատիվորեն կատարելագործում է իր նորմատիվային բազան, կառավարման ու օպերատիվ արձագանքման կառուցվածքները՝ ռազմաքաղաքական, բնական-տեխնիկական և հումանիտար բնույթի արդի սպառնալիքներին համարժեքորեն արձագանքելու խնդիրների լուծման նպատակով: 1992թ. Հավաքական անվտանգության պայմանագրի ստորագրումից հետո անցած տարիների ընթացքում մասնակից պետությունները հավաքական *ռազմական* անվտանգության գաղափարը մարմնավորել են միջազգային տարածաշրջանային կազմակերպության ստեղծման մեջ, որի նպատակն է արդի բոլոր տեսակի՝ ինչպես սիմետրիկ, այնպես էլ ասիմետրիկ բնույթի սպառնալիքների կասեցումը:

Այս համատեքստում Հայաստանի համար հատուկ նշանակություն ունեն փոփոխությունները ՀԱՊԿ կանոնակարգում¹, ըստ որոնց՝ վերացվում է այն սկզբունքը, որով կազմակերպությունը որոշում էր կայացնում միայն կոնսենսուսի ձեռքբերումից հետո: Այսուհետ, եթե նրա որևէ մասնակից դեմ է որևէ որոշման կամ ձեռնպահ է մնում, ապա նա ընդամենը ազատվում է դրա հետևանքների համար պատասխանատվությունից²: Այս նորամուծությունը ՀԱՊԿ-ը դարձնում է զգալիորեն ավելի ճկուն մասնակից պետությունների անվտանգության ապահովման հարցերում և ուղղակիորեն վերաբերում է Հայաստանին:

Մինչև այս լրացման ընդունումը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (որտեղ Հայաստանից բացի մտնում են նաև Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը) ՀՀ անդամության գործոնը գործնականում հանգում էր միայն ռուսական արտադրության սպառազինության և

¹ Հայաստանի խորհրդարանն այն վավերացրել է 2001թ. հոկտեմբերի 25-ին:

² «Ռեգնում» տեղեկատվական գործակալություն, 2011թ. հոկտեմբերի 25, www.regnum.ru/news/1459434.html.

ռազմական տեխնիկայի (ՄՌՏ) ձեռքբերման հնարավորությանը արտոնյալ ներուսաստանյան գներով, և պայմանագրի թիվ 4 հոդվածի¹ գործարկման մասին խոսք չկար:

Այստեղ կարևոր էր անգամ ոչ թե մարտական գործողություններին, առաջին հերթին, Հայաստանի տարածքում տեղակայված ՌԴ ՋՈւ հիփոթետիկորեն հնարավոր ներգրավման փաստը, այլ Մոսկվայի համար անցանկալի ՀԱՊԿ քաղաքական ճգնաժամի ծագումը, երբ կազմակերպության մյուս անդամ պետությունները, ավելի շուտ, կգրադեցնեին (հիմնականում տնտեսական (նավթագազային) և դավանական պատճառներով) չեզոք դիրքորոշում Ադրբեջանի և Հայաստանի միջև ռազմական հակամարտության առնչությամբ:

Իսկ հիմա ճիշտ ժամանակին, գործուն և մասշտաբային օգնության ցուցաբերումը ՀԱՊԿ եթե ոչ բոլոր, ապա մի քանի պատասխանատու անդամների կողմից, մյուսների ոչ գործուն չեզոքության պայմաններում, ավելի իրական է թվում:

Հարկ է նշել, որ, չնայած պայմանագիրն ստորագրած շատ պետություններում ներքաղաքական սուր հիմնախնդիրների, իսկ դրանց մի մասում էլ զինված էթնոքաղաքական հակամարտությունների առկայությանը, գոյության առաջին փուլում ՀԱՊ-ը սահմանափակվում էր իր հիմնական խնդիրը կատարելով՝ ապահովելով մասնակից պետությունների հավաքական պաշտպանությունն արտաքին ռազմական սպառնալիքներից: Եվ ինչպես ցույց տվեց պատմությունը, ներքաղաքական հակամարտություններին չմիջամտելն արդարացված էր:

¹ Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե մասնակից պետություններից մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա դա կդիտարկվի որպես ագրեսիա սույն պայմանագրի բոլոր մասնակից պետությունների դեմ: Մասնակից պետություններից ցանկացածի դեմ ագրեսիայի դեպքում մյուս բոլոր մասնակից պետությունները նրան կտրամադրեն անհրաժեշտ օգնությունը, ներառյալ ռազմականը, ինչպես նաև կաջակցեն իրենց տրամադրության տակ եղած միջոցներով՝ հավաքական պաշտպանության իրավունքի իրականացման կարգով, ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան...»:

Նախ՝ մասնակից պետությունների քաղաքական նոր վերնախավը չուներ տարաբնույթ և բարդության առումով տարաստիճան քաղաքական և էթնիկական հակամարտություններին արձագանքելու փորձ: Իսկ արտաքին ուժերի ներգրավումը շատ դեպքերում զգալիորեն կնվազեցնեի իշխանությունների ձեռնարկած գործողությունների լեգիտիմությունը, ինչը վերջնարդյունքում հակամարտային իրավիճակի լուծման համար ուղղակի հակադարձ էֆեկտ կունենար:

Երկրորդ՝ դա էլ ավելի կբարդացնեի գործընկեր պետության ազգային ինքնիշխանության պահպանման և նրա ներքին գործերին միջամտելու միջև սահմանի որոշման առանց այդ էլ ոչ դյուրին խնդիրը՝ անգամ ներքաղաքական և տարածաշրջանային կայունությունը պահպանելու նպատակով:

Մինչև վերջերս՝ մինչև 2010թ. Ղրղզստանում այսպես կոչված «կակաչների հեղափոխության» իրադարձությունները, ՀԱՊԿ անդամ պետությունները պատրաստ չէին իրենց պետական ինքնիշխանության մի մասը պատվիրակել վերազգային կառույցներին:

Ներքաղաքական գործընթացներին ՀԱՊԿ չմիջամտելն էլ հենց որոշիչ է այդ կազմակերպության «կենսունակության» հարցում: Այս դեպքում հաջող իրականացվում էր «մի վնասիր» սկզբունքը. կատարելով ՀԱՊԿ վրա դրված հիմնական դերը՝ հավաքական պաշտպանությունն արտաքին ռազմական սպառնալիքներից, կազմակերպությունը պահպանեց իր հանդեպ եղած վստահությունը՝ ստանձնելով պետությունների ներքաղաքական կայունության պատասխանատվությունն ընդդեմ իրենց սեփական կամ միանշանակ մեկնաբանություն չունեցող ժողովրդական կամարտահայտման և միջպետական քաղաքական և ռազմական մեխանիզմների լիակատար բացակայության պայմաններում:

Թեև հենց սա էլ հանգեցրեց այն բանին, որ Ադրբեջանն այդպես էլ չվավերացրեց պայմանագրին միանալը, իսկ Վրաստանը հրաժարվեց երկարացնել դրա գործողության ժամկետը: Հիմնականում սա ուղղակիորեն կապված էր Հարավային Կովկասում հակամարտությունների լուծման և անվտանգության համակարգի ընտրության ի հայտ եկած այլընտրանքի (որը պատրաստ էր տարածաշրջանում իրականացնել ՆԱՏՕ-ն) վերաբերյալ Մոսկվայի դիրքորոշման հետ:

Ռուսաստանի նախաձեռնած այս կամ այն նախագծին մասնակցությանը զուգահեռ, ԱՊՀ պետություններն անկախության ձեռքբերման պահից սկսած՝ ձեռնամուխ եղան Հյուսիսատլանտյան դաշինքի հետ սերտ կապերի հաստատմանը: Նրանք բոլորն էլ դարձան «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի (Տաջիկստանը՝ 2002թ., մյուսները՝ դեռ 1994-ից) մասնակիցներ: Այսինքն, այդ պահից սկսած՝ երկու ռազմաքաղաքական բլոկների միջև մրցակցությունը ԱՊՀ երկրներում իրենց ազդեցությունը պահպանելու կամ տարածելու համար վավերագրական նոր ձևակերպում ստացավ:

Վրաստանն իր քաղաքականությունը ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հանդեպ սկսեց կառուցել այն պայմաններում, երբ տարածաշրջանային երեք հակամարտություններից երկուսում՝ վրաց-աբխազականում ու վրաց-հարավօսականում, այդ շրջանում չճանաչված Աբխազիայի և Հարավային Օսիայի հանրապետությունները ստանում էին Ռուսաստանի բացահայտ և միանշանակ աջակցությունը: Ուստի, դեպի Մոսկվա կողմնորոշված անվտանգության համակարգում Թբիլիսիի համար ընդունելի տարբերակով դրանց լուծման հեռանկարները հավասար էին զրոյի: Թեև դեպի ՆԱՏՕ կողմնորոշված անվտանգության համակարգում նույնպես այդ շանսերը խիստ աննշան էին, բայց նայնպես կային:

Սակայն վերջնարդյունքում Թբիլիսիի չարդարացված բարձր ակնկալիքները ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունից հանգեցրին

2008թ. օգոստոսի Հնգօրյա պատերազմին, որի ավարտին Վրաստանը, փաստորեն, կորցրեց իրենից առանձնացած տարածքներն իր իրավասության տակ վերադարձնելու հնարավորությունը, ինչպես նաև զգալիորեն նեղացրեց արտաքին քաղաքական մանևրի իր հնարավորությունները:

ՆԱՏՕ և ՀԱՊԿ անվտանգության համակարգերի հետ հարաբերությունների կառուցման միանգամայն այլ սցենարով էին զարգանում իրադարձությունները երրորդ՝ դարաբաղյան հակամարտության շուրջ: Ե՛վ Հայաստանը, և՛ Ադրբեջանը դեռ հույս ունեն փոխել Ռուսաստանի նախապատվությունը դեպի իրենց կողմը: Հայաստանը՝ ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական լայն համագործակցության, տնտեսական կոոպերացման միջոցով՝ էներգետիկայի, իսկ հետագայում՝ էներգատար մետալուրգիայի հաշվարկով:

Ադրբեջանը, իր հերթին, ջանում է ցանկալի արդյունքների հասնել հետևյալ միջոցներով.

- ռազմատեխնիկական համագործակցություն (շատ ավելի տարողունակ շուկա ունենալով, քան Հայաստանինն է, ռուսական ռազմատեխնիկա և սպառազինություններ գնելու համար);
- երկրում ռուսական համայնքի ներկայության գործոնը;
- Կասպից ծովի շուրջ ընդհանուր հիմնախնդիրների մի ամբողջ համալիրի առկայությունը, սկսած նրա կարգավիճակից ու էկոլոգիայից, Հյուսիս-Հարավ միջանցքի տրանսկասպյան նավթա-գազատարների կառուցման՝ Մոսկվայի համար անընդունելի նախագծերի իրականացումից մինչև լճի ջրավազանում ոչկասպյան պետությունների ռազմածովային ուժերի և, առհասարակ, Կասպիայի ռազմականացման չթույլատրումը:

Տնտեսական և ռազմատեխնիկական շփման կետերի այսքան լայն ցանկի առկայությունը, որոնք ապահովում են Ռուսաստանի

հետաքրքրվածությունն Ադրբեջանի հետ գործընկերության հարցում, Հայաստանին մղում է հավասարակշռելու իր արտաքին քաղաքական, պայմանականորեն ասած՝ «ռուսամետ» ուղղությունը «արևմտամետի» հետ: Նման քաղաքականությունը ենթադրում է, որ Հայաստանը զուգահեռաբար պետք է հաստատի և պահպանի մոտավորապես հնարավորինս նույնամակարդակ հարաբերություններ երկու ուղղություններով էլ:

Բայց այստեղ կան մի շարք զսպիչ նրբություններ: Եթե եվրոպական քաղաքական և տնտեսական կառույցներում փոխշահավետ կոոպերացիայի և ինտեգրման հարցերի վերաբերյալ Հայաստանում առանձնակի տարածայնություններ չկան հանրային կարծիքում, ապա միանգամայն այլ պատկեր է ուրվագծվում ՆԱՏՕ-ի հետ համագործակցության խորացման, իսկ հետագայում՝ նաև հնարավոր անդամակցության հարցում:

Նախ՝ տարբեր կազմակերպությունների անցկացրած մի շարք հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցության կողմնակիցների և հակառակորդների թիվը երկար տարիներ գրեթե անփոփոխ է մնում՝ մոտավորապես հարցվածների 30-35%-ը: Եվ սա՝ այն ֆոնին, երբ ԵՄ մտնելու կողմնակիցների թիվը 60-70% է, իսկ հակառակորդներինը՝ ընդամենը 10-15%: Ի դեպ, ՆԱՏՕ-ի հանդեպ նման ոչ միանշանակ վերաբերմունքի պատճառը միանգամայն հասկանալի է. Հայաստանում դաշինքը զուգակցվում է, առաջին հերթին, Թուրքիայի հետ: Սա, իհարկե, իր տրամաբանությունն ունի. Հայաստանը աշխարհագրականորեն «առնչվում» է ՆԱՏՕ-ի հետ Թուրքիայի միջոցով. Թուրքիան Վրաստանի և Ադրբեջանի կուրատորն է եվրատլանտյան ծրագրերում և նախագծերում, հետագայում աստիճանաբար Թուրքիայի վրա են «դուրս գալու» Վրաստանի և Ադրբեջանի ռազմատրանսպորտային ենթակառուցվածքները և այլն:

Երկրորդ՝ գործնական հարց է ծագում. ինչպե՞ս և մինչև ո՞ր աստիճանի կարող է համատեղվել Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին և, ասենք, ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների պլանում (*IPAP*) նրա ներառվելը:

Որոշ կետերում դժվար, բայց այնուամենայնիվ, դեռ կարելի է քիչ թե շատ հաջողությամբ համատեղել երկու կազմակերպությունների հանդեպ ստանձնած պարտավորությունների զուգահեռ կատարումը: Օրինակ, հետախուզական տվյալների փոխանակումը «Գործընկերության գործողություններն ընդդեմ ահաբեկչության» ծրագրով, խաղաղարարների լրացուցիչ ստորաբաժանումներ կազմելը և «Թեժ կետեր» ուղարկելը, Հայաստանի զինծառայողների պատրաստումը ՆԱՏՕ քոլեջներում և Ռուսաստանի ռազմական ուսումնարաններում, համատեղ գորավարժությունների անցկացումը և այլն:

Սակայն, մեր կարծիքով, անհնար է համատեղել, օրինակ, *IPAP* առաջին փուլերում ընդունված հրամանատարա-վերահսկողական կապի բարեփոխման երկարատև ծրագրի լրիվ ծավալով կատարումը, որը ենթադրում էր անցում ՆԱՏՕ չափանիշներով միասնականացված կապի, նավիգացիայի և նույնականացման համակարգին: Թեև *IPAP* ներդրման վերջնաժամկետի որոշակի սահմանափակումներ չկան, բայց ՆԱՏՕ-ի հետ համագործակցության այս փուլը, առանց կոոպերացիայի ավելի բարձր մակարդակի անցնելու, անվերջ շարունակվել չի կարող:

Բացի այդ, այստեղ հարկավոր է հաշվի առնել այն փաստը, որ համաձայն 2008թ. հրապարակված ՌԴ Արտաքին քաղաքականության հայեցակարգի, Մոսկվան Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ) դիտարկում է որպես ԱՊՀ տարածքում կայունության պահպանման և անվտանգության ապահովման առանցքային գործիք¹: Ըստ այսմ՝ ԱՊՀ տարածքում Ռուսաս-

¹ Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգը, 2008թ. հուլիսի 12, <http://www.mid.ru/bdcomp/ns-osndoc.nsf>

տանի վերաբերմունքը առանց ռուսական մասնակցության ենթատարածաշրջանային կազմավորումների և այլ կառույցների հանդեպ ենթադրվում է որոշել՝ «ելնելով բարիդրացիության և կայունության ապահովման գործում նրանց իրական ներդրման գնահատականից, գործնականում ռուսաստանյան օրինական շահերը հաշվի առնելու և համագործակցության արդեն առկա մեխանիզմները հարգելու նրանց պատրաստակամությունից»¹, առաջին հերթին ՀԱՊԿ-ում ռազմաքաղաքական համագործակցության մասով:

Այն, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականության և տնտեսական համագործակցության համար ավելի գերակա ուղղություններ են դառնում ԱՊՀ գործընկերների հետ հարաբերությունները, իսկ դրանք իրագործվելու են ՀԱՊԿ-ի վրա հենվելով, ակնհայտ ցույց տվեց ՌԴ նախագահ Վ.Պուտինի պահվածքը, որն անտեսեց Քեմփ Դեիդում անցկացվող «Մեծ ութնյակի» զագաթաժողովը և մասնակցեց ՀԱՊԿ հորելյանական և ԱՊՀ ոչպաշտոնական զագաթաժողովներին, որոնք անցկացվեցին 2012թ. մայիսին Մոսկվայում:

Առայժմ վաղ է դատել այն մասին, թե հետագայում ինչպես կզարգանան ՀԱՊԿ-ը և Եվրասիական միությունը, ինչպիսին կլինեն դրանց հարաբերությունները՝ զուգահեռ գոյություն² և, փոխադարձ գործակցություն³ և, թե⁴ լիակատար սիմբիոզ, բայց ցանկացած պարագայում խոր տնտեսական ինտեգրման վրա հիմնված ռազմաքաղաքական հարաբերությունները կդառնան շատ ավելի ամուր և հուսալի:

Միևնույն ժամանակ, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցության տեղափոխումը Եվրասիական հարթակ չի փրկի այդ ոլորտներում առկա բոլոր հիմնախնդիրներից: Իհարկե, դրանց մի մասը կվերանա, մյուսները կդառնան ավելի ռելիեֆային, բայց մի մասն էլ կդառնա ավելի ցավագին և մեծ հրատապություն ձեռք կբերի:

¹Նույն տեղում:

Ներկա պահին առկա հիմնախնդիրներից կարելի է առանձնացնել մի քանիսը:

1. ՀԱՊԿ-ը համատեղ ռազմական գործողություններ անցկացնելու գործնական փորձ չունի: Իսկ ինչպես ՀԱՊԿ, այնպես էլ նրա անդամ պետությունների կոշտ և միանշանակ արձագանքման բացակայությունը 2012թ. հունիսի 5-ի գիշերը Հայաստանի և Ադրբեջանի սահմանին տեղի ունեցած մարտական բախմանը թույլ տվեց մի շարք ռազմական և քաղաքական փորձագետների կասկածել, թե այն ի վիճակի է համարժեքորեն և ժամանակին կատարել կազմակերպության կանոնադրության մեջ հայտարարված պարտավորությունները իր լիիրավ անդամներից մեկի հանդեպ իրական սպառնալիքների դեպքում:

Այսպես, Թուրքիայի խորհրդարանի՝ Ազգայնական շարժում կուսակցությունից պատգամավոր, Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (*TURKSAM*) տնօրեն Սինան Օհանը *SalamNews*-ին տված հարցազրույցում հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման դեպքում ոչ Ադրբեջանը, ոչ Թուրքիան Ռուսաստանին թույլ չեն տա ռազմական օգնություն ցուցաբերել Հայաստանին. «Մտքերը, թե Ռուսաստանը Հայաստանին ռազմական և այլ օգնություն կցուցաբերի, մնացել են անցյալում»¹:

Ուզում ենք պատկերացնել, որ եվրասիական ինտեգրման հետագա խորացումը կարող է նվազեցնել ապագայում նման իրավիճակի կրկնության հավանականությունը:

2. ՀՀ ռազմական անվտանգության հարցերը շոշափող ռազմատեխնիկական բնույթի որոշակի հիմնախնդիրները ծագել են 2012թ. ապրիլի 19-ին Վրաստանի խորհրդարանի ընդունած որոշման հետևանքով, ըստ որի՝ հնգամյա գործողությունից հետո չեղյալացվում էր Ռուսաստանի հետ կնքված պայմանագիրը դեպի Հայաստանի 102-րդ

¹ «Ռեզնում» տեղեկատվական գործակալություն, 2012թ. օգոստոսի 10, <http://regnum.ru/news/polit/1560301.html>

ռուսական ռազմակայան վրացական տարածքով ռազմական բեռնափոխադրումների և զինվորական անձնակազմերի տարանցման մասին:

Այս նախաձեռնությամբ հանդես էր եկել Վրաստանի նախագահ Մ.Սաակաշվիլին, իսկ խորհրդարանը միաձայն (84 «կողմ») քվեարկել էր ռուս-վրացական համաձայնագիրը չեղյալացնելու օգտին: Վրաստանի և Ռուսաստանի միջև պայմանագիրը ձևակերպվել էր 2006թ. մարտի 31-ին, Վրաստանի տարածքից ռուսական ռազմակայանները դուրս բերելու մասին պայմանագրի հետ նույն փաթեթում: Երկու փաստաթուղթն էլ Վրաստանի խորհրդարանը վավերացրել է 2007թ. ապրիլի 13-ին: Համաձայնագիրն առաջին հերթին ենթադրում էր 102-րդ ՌՌԿ կադրային և նյութատեխնիկական ապահովում, որը տեղի էր ունենում ինչպես օդային, այնպես էլ ցամաքային տարանցման օգտագործմամբ:

Վերջին անգամ, փոխարտգործնախարար Նինո Կալանաձեի խոսքով՝ Վրաստանը Ռուսաստանին տարանցում թույլատրել է 2008թ. հուլիսին: Հետագայում Ռուսաստանը դիմել է Վրաստանին նման խնդրանքով, բայց մերժում է ստացել «քաղաքական աննպատակահարմարության» պատճառով և ելնելով «Ռուսաստանի կողմից իրականացվող ագրեսիայից» և 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո տեղի ունեցած իրադարձություններից¹:

Վրաստանում 2012թ. հոկտեմբերին խորհրդարանական ընտրություններում ընդդիմադիր «Վրացական երազանք» դաշինքի հաղթանակի հետ կապված՝ վրաց-ռուսական հարաբերությունների փոքրիշատե կարգավորման նոր հեռանկարներ բացվեցին, այդ թվում և նրա տարածքով ռազմական տարանցման հարցում:

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ ներկայում գոյություն ունեն նաև 102-րդ ՌՌԿ-ն սպառազինությամբ և ռազմական տեխնի-

¹ Грузия опускает флагбаум. Независимое военное обозрение, 29 апреля 2011г., http://nvo.ng.ru/armament/2011-04-29/9_gruzia.html

կայով, պարենով և այլ ապրանքներով մատակարարելու մի շարք այլընտրանքային երթուղիներ: Դրանցից են.

- երրորդ երկրներից վրացական տարածքով Հայաստան ռազմական մատակարարումների տարանցումը,
- Աստրախան/Օլյա նավահանգիստ (Ռուսաստան)-Էնզելի (Իրան)-Մեդրի (Հայաստան) երթուղին: Սա ամենախրական երթուղին է, թեև ամենաերկարն է և ամենածախսատարը,
- օդային և ցամաքային տարանցման օգտագործումը Թուրքիայով:

Թուրքական կողմը, մասնավորապես՝ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Բուրաք Օզութերգինը, չի ժխտում, որ «Ռուսաստանն արդեն մի քանի անգամ դիմել է մեզ Հայաստանի իր ռազմակայանը ապահովելու հարցով, բայց մենք ամեն անգամ նշել ենք, որ Թուրքիան կարող է Ռուսաստանին թույլ տալ Գյումրիում իր ռազմակայանն ապահովել միայն հագուստով, սննդամթերքով և ոչ ռազմական նշանակության այլ մատակարարումներով: Բայց մենք երբեք թույլ չենք տա օգտագործել մեր տարածքը Հայաստան սպառազինություններ մատակարարելու համար»¹:

Սակայն հաշվի առնելով ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման մակարդակն ու առկա միտումները, Միջազգային կոալիցիայի գորքերին և, առաջին հերթին, Աֆղանստանում ՆԱՏՕ գորքերին ՌԴ տարածքով տարանցվող մատակարարումը, ինչպես նաև դարաբաղյան հակամարտության գոտում ակտիվ մարտական գործողությունների վերսկսման հեռանկարին Անկարայի զուսպ մոտեցումը, անհրաժեշտության դեպքում Թուրքիայի տարածքով ոչ ռազմական բեռների, երկակի նշանակության բեռների (որոնք

¹ МИД Турции: «Анкара никогда не позволит использовать турецкую территорию для поставок в Армению вооружения», ИА "The First News", 15 августа 2009г., <http://1news.az/politics/20090815122204791.html>

միասին կազմում են մատակարարման հիմնական ծավալը, ինչպեսև ըստ էության, ռազմական բեռների տարանցման դե-ֆակտո իրականացման հնարավորությունը հավանական է թվում:

3. Բայց մի խնդիր, և դա հստակ կարելի է նշել, լուծում չի գտել առկա շրջանակներում և էլ ավելի մեծ հրատապություն է ձեռք բերելու հետագայում. դա պատշաճ տեղեկատվական, առավել ևս՝ տեղեկատվա-վերլուծական ուղեկցության բացակայությունն է ինտեգրացիոն, ռազմաքաղաքական գործընթացներում՝ հոգուտ ՀԱՊԿ-ի և ԵԱՄ-ի հետ հարաբերությունների խորացման, այս ուղղությամբ հակառակորդների ակնկալվող տեղեկատվական դիմակայության պայմաններում:

Հեռանկարները

102-րդ ՌՌԿ գործառնական խնդիրների ընդլայնումը պահանջում է ոչ միայն նրա տրամադրության տակ գտնվող ուժերի և միջոցների ուժեղացում, ՍՌՏ արդիականացում, ինչն արդեն պլանավորված է պայմանագրի համապատասխան լրացումներում, այլև նրա զորամասերի և ստորաբաժանումների տեղակայման աշխարհագրության ընդլայնում:

Հայ-ռուսական Ուժերի (զորքերի) միավորված խմբավորման (Ու(Զ)ՄԽ) տեխնիկական զինումը բարելավելու հիմնական ուղղություններից մեկը նրա ՀՕՊ և ՀՀՊ ուժերի ու միջոցների և, մասնավորապես, ռադիոէլեկտրոնային ստորաբաժանումների ուժեղացումն է: Սա էլ ավելի հրատապ դարձավ ռուսական կողմից «Դարյալ» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի (ՌԴ Հրթիռային հարձակման նախագգուշացման համակարգի (ՌԴ ՀՀՆՀ) Գաբալայի ՌԼԿ) շահագործման դադարեցման պատճառով, ինչը պայմանավորված էր (ըստ պաշտոնական վարկածի) նրանով, որ Ադրբեջանում դրա վարձակալության ժամկետը սպառվել էր:

Ի լրումն ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքի մոտ «Վորոնեժ-ԴՄ» բարձր գործարանային պատրաստվածության ՌԼԿ նոր եռահատված բլոկի գործարկման, Ու(Զ)ՄԽ ՀՕՊ խմբավորման և ռադիոէլեկտրոնային ստորաբաժանումների ու ԼՂՀ Պաշտպանության բանակի հնարավորությունների ուժեղացումը թույլ կտա ոչ միայն փոխհատուցել «Դարյալի» կորուստը, այլև բարձրացնել Հարավային Կովկասի տարածաշրջանում, Իրանում և Թուրքիայում օդատիեզերական իրադրության վերահսկման հուսալիությունը, ինչն, իր հերթին, կամրապնդի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի օդատիեզերական պաշտպանության հուսալիությունը:

2012թ. ապրիլին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, Գաբալայի ՌԼԿ շահագործման պայմանագրի երկարացման վերաբերյալ բանակցային գործընթացում առաջացած խնդիրների ֆոնին, հայտարարեց, որ ՀՀ-ն պատրաստ է Ռուսաստանին տրամադրել իր տարածքը Հրթիռային հարձակման նախագրուշացման համակարգի ռադիոլոկացիոն կայան կառուցելու համար. «Կարծում եմ, որ այստեղ անգամ կարող են առավելություններ լինել, քանի որ Հայաստանը լեռնային երկիր է: Ընդգրկումն ավելի լայն կարող է լինել»¹: Նման հայտարարությունը հաստատեց Հայաստանի հավատարմությունն իր պարտավորություններին ինչպես իբրև ԱՊՀ երկրների ՀՕՊ միավորված համակարգի մասնակից, այնպես էլ ՀԱՊԿ անդամ:

Միևնույն ժամանակ, այնպիսի պայմաններում, երբ Արմավիրի մոտ «Վորոնեժ-ԴՄ»-ի երկրորդ հատվածի գործարկումը՝ նախատեսված փոխարինելու Գաբալայի ՌԼԿ-ին, մոտենում է ավարտին, ինչպես նաև հաշվի առնելով ՌԴ ՀՀՆՀ բոլոր հնացած ՌԼԿ-ները փոխելու մասշտաբային ծրագիրը, քիչ հավանական է թվում ևս մեկ նմանատիպ կայանի կառուցումը Հայաստանում:

Իսկ ահա կոնտեյներային տիպի «Մարս» կամ նրա արտահանվող «Մարս-Յ» տարբերակի շարժական ՌԼԿ-ի (կախված այն բանից՝

¹ «Коммерсантъ», 4 ապրիլի 2012թ., <http://kommersant.ru/doc/1908052>

102-րդ ՌՌԿ-ի, թե Հայաստանի սպառազինմանն այն կտրամադրվի) փորձնա-մարտական գործարկումը միանգամայն հնարավոր է: Բացի այդ, դրա շարժական հնարավորությունները, հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքն ու նրա քաղաքական շրջապատը, շատ ավելի հարմար են հսկման հատվածը փոփոխելուն՝ ընթացիկ անհրաժեշտությունից կախված:

Տավուշի մարզում՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սահմանների հատման կետում ՀՕՊ զենիթահրթիռային համալիրների (ՋՀՀ) տեղակայման պարագայում, անգամ 102-րդ ՌՌԿ սպառազինման մեջ առկա C-300B ՋՀՀ հիման վրա և հաշվի առնելով Հարավային Օսիայում, Աբխազիայում, ՌԴ Հարավային ռազմական օկրուգում (Դադստանում) Ռուսաստանի ռազմակայաններում համանման սպառազինության առկայությունը, ինչպես նաև Կասպյան նավատորմիկի նավային ՀՕՊ ՋՀՀ հնարավորությունները, Վրաստանի և Ադրբեջանի գրեթե ամբողջ տարածքը ծածկված կլինի ոչ միայն հայտնաբերման, այլ նաև ՋՀՀ թիրախի նշման ՌԼԿ-ներով:

2011թ. սեպտեմբերի 14-ին Թուրքիան ԱՄՆ-ի հետ հուշագիր կնքեց իր տարածքում *AN/TPY-2* (հին անվանումը՝ *FBR-T - Forward Based Radar - Transportable*) ռադիոլոկացիոն կայան տեղակայելու մասին, որը նախատեսված է իրենց թռիչքի ակտիվ տեղամասում բալիստիկ հրթիռների հայտնաբերման, ճանաչման և ուղեկցման համար: Մտահոգացման համաձայն՝ այն պետք է ստացված տվյալները փոխանցի ԱՄՆ ՌԾՈւ նավերին, որոնց սպառազինության մեջ կա «*Aegis*» ՀՀՊ, որն էլ իրականացնելու է դրանց անմիջական որսումը: Շուտով ռադարը տեղակայվեց Թուրքիայի հարավ-արևելքում, Մալաթիա նահանգի (իլ) Քուլունջակ գավառում (թուրք.՝ *Kuluncak*): Սակայն ռուս փորձագետների կարծիքով՝ մինչև 2000 կմ հեռավորությամբ թիրախների հայտնաբերման համար նախատեսված այդ ռադարի հիմնական խնդիրներից մեկն է նաև Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի մի մասի հսկումը, ինչպես նաև Ռուսաստան-

նի հարավի օդային տարածքի և, մասնավորապես, փորձնական հրաձգարաններից ռուսական հրթիռների փորձնական արձակումներին հետևելը: Սա կարող է հարմար առիթ հանդիսանալ ՌԴ-ի համար, որպեսզի ուժեղացնի 102-րդ ՌՌԿ-ն ինչպես ԱՄՆ ՀՀՊ այդ տարրի աշխատանքի ռադիոէլեկտրոնային, այնպես էլ անմիջականորեն կրակային ճնշման ուժերով: Հաշվի առնելով Հայաստանի սահմաններից օբյեկտի հեռավորությունը՝ ասիմետրիկ պատասխանը կարող է ծավալվել ոչ այնքան «Իսկանդեր-Մ» օպերատիվ-տակտիկական հրթիռային համալիրի բազայի կազմում, որքան դրա ուժեղացումը ոմբագրոհային ավիացիայում: Դա թույլ կտա Ուժերի (գործերի) միավորված խմբավորմանը կատարել նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության ամրապնդման մի շարք առանձնահատուկ խնդիրներ բոլոր ուղղություններով:

Այն իրավիճակում, երբ Եվրասիական միությունում ինտեգրման գործընթացը գրեթե հասել է գագաթնակետին և ներկայումս նրա ներկայացուցիչներից ոչ ոք համարձակություն և պատասխանատվություն չի ստանձնում Երևանին խոստանալ ԵՄ անդամություն անգամ հեռավոր ապագայում, այլընտրանքային ինտեգրացիոն գործընթացները Հայաստանում Եվրասիական միության ուղղությամբ կարող են էլ ավելի արագանալ:

Տնտեսական նման ինտեգրման հեռանկարը, ինչը շեշտադրում են Մոսկվայում, բայց խիստ որոշակի քաղաքական հետևանքներով, կձևավորի Մոսկվայի հայամետ դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության լուծման հարցում:

Այն փաստը, որ Հայաստանն արդեն ներկա պահին իրական և գործնական շահ է ստանում ՀԱՊԿ շրջանակում ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական սերտ համագործակցությունից և Ռուսաստանի հետ ուղղակի երկկողմանի հարաբերություններից, թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումը, որ ՀՀ-ի համար հիմնականն են մնալու համագործակցության հենց այդ ուղղությունները, որոնք

լիարժեք ներգրվում են Եվրասիական միությունում ինտեգրման նախագծի շրջանակում:

Փետրվար, 2013թ.

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО В КОНТЕКСТЕ ЕВРАЗИЙСКОЙ ИНТЕГРАЦИИ

Сергей Саркисян

Резюме

С момента восстановления своей государственной независимости в 1991г. Армения в том или ином статусе участвует сразу в нескольких военно-политических и экономических проектах, таких как СНГ, ОДКБ, ЕврАзЭС, программа НАТО «Партнерство ради мира», Европейская политика добрососедства, «Восточное партнерство» и т.д.

Появление относительно новой идеи – Евразийского союза, и конкретные шаги, предпринимаемые Россией, Казахстаном и Беларусью в этом направлении, предоставляют Армении возможность альтернативного выбора основного вектора своего развития в сторону наиболее приемлемого и привлекательного интеграционного проекта. Одним из основополагающих факторов в таком выборе является непростая военно-политическая ситуация в регионе Южного Кавказа, угрозы Азербайджана перейти к военным методам разрешения Нагорно-Карабахского конфликта, что предопределяет видение одной из основных задач, стоящих перед Республикой Армения и Нагорно-Карабахской Республикой, в обеспечении своей военной безопасности.

В настоящее время эта задача не в последнюю очередь решается через членство Армении в ОДКБ, через двухстороннее военно-политическое и военно-техническое сотрудничество с Россией.

Как в дальнейшем будут эволюционировать ОДКБ и Евразийский союз, какими будут их отношения, какие перспективы открываются и какие проблемы могут быть разрешены в случае присоединения Армении к этому новому интеграционному проекту – этим вопросам и посвящена предлагаемая статья.